8 ապրիլի 2010 թվականի N 385 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթափի գյուղական համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, գյուղական համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու, անցկացնելու և ընտրության նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» N 39-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «1234720» թիվը փոխարինել «1587147» թվով.

2) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում «602350» թիվը փոխարինել «620827» թվով.

3) որոշման N 2 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունվարի 21-ի N 39-Ն որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾԱԽՍԵՐԻ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

| NN ը/կ | Ծախսերը | Գումարը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ<br>այդ թվում՝ | 270000 |
| | 1) հանձնաժողովի նախագահի | 60000 |
| | 2) հանձնաժողովի նախագահի տեղակալի | 30000 |
| | 3) հանձնաժողովի քարտուղարի | 30000 |
| | 4) հանձնաժողովի անդամների<br>(5 անդամ x 30000 դրամ) | 150000 |
| 2. | Փաստացի սոցիալական ապահովության վճարներ | 72500 |
| 3. | Տրանսպորտային նյութեր | 5000 |
| 4. | Կապի ծառայություններ | 1000 |
| 5. | Գրասենյակային նյութեր և հագուստ | 3000 |
| | ընդամենը | 351500,00 |
| | 4 տեղամասային ընտրական հանձնաժողովների ծախսեր<br>(4 x 351500) | 1406000,00 |

| | |
|---|---|
| Այլ ծախսեր<br>(քվեաթերթիկների տպագրություն (6048 ընտրող + 6048 x 0.03) x 5 դրամ) | 31147,00 |
| Ընդամենը | 1437147,00». |

4) որոշման N 3 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունվարի 21-ի N 39-Ն որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

| NN ը/կ | Ծախսերը | Գումարը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Գրասենյակային նյութեր և հագուստ<br>(ընտրողների ցուցակներ, 6048 ընտրող x 3.9 դրամ) | 23587,00 |
| 2. | Կապի ծառայություններ<br>(ընտրողների ծանուցագրեր, 6048 ընտրող x 98.75 դրամ) | 597240 |
| | Ընդամենը | 620827,00»: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. ապրիլի
Երևան